

Մեծագույն արժեք

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Ճարտարանք

Մաթեմատիկայի ուսուցիչը նկատել է, որ իր աշակերտները դժվարանում են թվեր գումարելու և հանելու գործողություններում: Դրա համար, որպես հետաքրքիր տնային աշխատանք, նա գրատախտակին գրել է n հատ ամբողջ թվեր, որոնք փոքր չեն -100 -ից և չեն գերազանցում 100 -ը: Աշակերտները պետք է թվերի միջև դնեն '+' և '-' նշաններ և հաշվեն արտահայտության արժեքը: Թվերի տեղերը փոխել չի կարելի, '-' նշանների քանակը պետք է լինի k հատ, մնացած $n-1-k$ հատը պետք է լինեն '+' նշաններ: Ուսուցիչը խոստացել է, որ բարձր գնահատակներ կստանան այն աշակերտները, ովքեր նշանները կդնեն այնպես, որ արտահայտության արժեքը կլինի հնարավոր մեծագույնը:

Գրեք ծրագիր, որը հաշվում և գտնում է հնարավոր մեծագույն արժեքը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են n և k թվերը ($0 < k < n < 30$): Երկրորդ տողում տրված են n ամբողջ թվերը:

Ելքային տվյալներ

Արտածեք մեկ թիվ՝ արտահայտության հնարավոր մեծագույն արժեքը:

Օրինակ

Մուտք	Ելք
3 1 -10 5 -7	2